

# ՑՈՒՑԱԿ
# ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

№ 380
ԲԵՐԱԹ
(Տաճկերեն)

**Թերթերը՝** 1:— **Պրակները՝** 1:— **Մեծությունը՝** 50,3×31,8×0,01 սմ.:— **Նյութը՝** դեղնած հաստ թուղթ:— **Կազմ՝** չունի, դրված է նամակի մի մեծ ծրարի մեջ:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 1բ:— **Տողերը՝** 5:— **Գծումներ՝** չունի:— **Գիրը՝** արաբերեն նասխի տառեր:— **Զարդագրություն՝** չունի, սակայն վերևում և կենտրոնում տպագիր նկարված է իսլամական տուղրան, ոսկեգույն, բառերն ու տառերը մեջեմեջ ընդելուզված: Տուղրայի չափերն են 14,5×11,5 սմ.:— Տուղրայի աջակողմյան մասում կա մի բառ, գրված ոսկեգույն, իսկ ձախակողմյան ներքևում էլ մի տող, դարձյալ ոսկեգույն:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ծաղկողը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 19-րդ դար:— **Վայրը՝** Կոստանդնուպոլիս:— **Ծանոթություն՝** սույն բերաթը նվեր է ստացվել Ստամբուլից:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1բ.— Croissant Rouge (Louisette):

Այստեղ կա երեք սև կնիքներ, տաճկերեն լեզվով, հետևյալ չափերով՝ 1,6×1,4 սմ., 1,5×1,1 սմ. և 2,5 սմ. տրամագծով մի կլոր կնիք: Թղթի ձախակողմյան վերևի անկյունում կա գրված տաճկերեն հինգ բառ:

Ծրարի վրա գրված է.

Chefakat Louisette (երկու անգամ):

Տրված գրասենյակի դիվանատան համարը՝ 2790:

Ապա մի տող կա տաճկերեն, որտեղ կարդացվում է «Դոկտոր Փեշդիմալճյան փաշա» բառերը: Ըստ երևույթին սա մի բերաթ է, որ տրված է կայսերական բժիշկ Դոկտոր Տիգրան փաշա Փեշդիմալճյանին (1840—1894 թթ.):

№ 381
ԲԵՐԱԹ
(Տաճկերեն)

**Թերթերը՝** 1:— **Պրակները՝** 1:— **Մեծությունը՝** 49,5×26,4×0,01 սմ.:— **Նյութը՝** դեղնած հաստ

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի № № Ը—Թ-ից, ԺԲ-ից 1965 թվականի № № Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի № № Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի № № Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի № № Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի № № Ա—Գ-ից, Ը-ից, 1974 թվականի № № Գ-ից, Է—Ը-ից, 1975 թվականի № № Ա-ից, Գ-ից, ԺԱ—ԺԲ-ից և 1976 թվականի № № Բ—Դ-ից:

թուղթ:— **Կազմ՝** չունի, դրված է նամակի մի մեծ ծրարի մեջ:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 1բ:— **Տողերը՝** 6:— **Գծումներ՝** չունի:— **Գիրը՝** արաբերեն նասխի տառեր:— **Զարդագրություն՝** չունի, սակայն վերևում և կենտրոնում տպագիր նկարված է իսլամական տուղրան, ոսկեգույն, բառերն ու տառերը մեջնմեջ ընդելուզված: Տուղրայի չափերն են 14,3×10,3 սմ.: Տուղրայի վերևում, աջակողմում և ձախակողմյան ներքնամասում կան տաճկերեն գրություններ գրված ոսկեգույն թանաքով:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ծաղկողը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 19-րդ դար:— **Վայրը՝** Կոստանդնուպոլիս:— **Ծանոթություն՝** սույն բերաթը նվեր է ստացվել Ստամբուլից:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բերաթում գրված են հետևյալ թվերը.

Թ. 1ա.—687/28:

Թ. 1բ.—321: Այստեղ կա չորս բառ տաճկերեն և երկու ստորագրություն, բոլորը գրված ոսկեգույն թանաքով:

№ 382

ԲԵՐԱԹ

(Տաճկերեն)

**Թերթերը՝** 1:— **Պրակները՝** 1:— **Մեծությունը՝** 57,5×37×0,01 սմ.:— **Նյութը՝** դեղնած հաստ թուղթ:—**Կազմ՝** չունի, դրված է նամակի մի մեծ ծրարի մեջ:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 1բ:— **Տողերը՝** 3:— **Գծումներ՝** չունի:— **Գիրը՝** արաբերեն նասխի տառեր:— **Զարդագրություն՝** չունի, սակայն վերևում և կենտրոնում տպագիր նկարված է իսլամական տուղրան, ոսկեգույն, բառերն ու տառերը մեջնմեջ ընդելուզված: Տուղրայի չափերն են 17,3×13,1 սմ.: Տուղրայի ձախակողմյան ներքևում կա մի քանի բառ տաճկերեն, գրված ոսկեգույն թանաքով: — **Գրիչը՝** անհայտ: **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ծաղկողը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 19-րդ դար:— **Վայրը՝** Կոստանդնուպոլիս:— **Ծանոթություն՝** սույն բերաթը նվեր է ստացվել Ստամբուլից:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1բ.— Կա մի տող տաճկերեն, երկու ստորագրություն՝ մեկը սև թանաքով, իսկ մյուսը՝ ոսկեգույն:

3 in simf Mecidiye nizame berate.

Բերաթին կից կա մի թղթակտոր, որի վրա հայկական երկու անուն կա. «Նշան Զարիշա բեյ Օվհաննես» և «Միքայել բեյ»: Կա նաև 750 համարը:

Ծրարի վրա գրված է հետևյալ անունը. «Խորասանճյան Միքայել էֆենդի»:

№ 383

ԲԵՐԱԹ

(Տաճկերեն)

**Թերթերը՝** 1:— **Պրակները՝** 1:— **Մեծությունը՝** 56,3×36,3×0,01 սմ.:— **Նյութը՝** դեղնած հաստ թուղթ:— **Կազմ՝** չունի, դրված է նամակի մի մեծ ծրարի մեջ:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 1բ:— **Տողերը՝** 3:— **Գծումներ՝** չունի:— **Գիրը՝** արաբերեն նասխի տառեր:— **Զարդագրություն՝** չունի, սակայն վերևում և կենտրոնում տպագիր նկարված է իսլամական տուղրան, ոսկեգույն, բառերն ու տառերը մեջնմեջ ընդելուզված: Տուղրայի չափերն են 17,5×12,3 սմ.: Տուղրայի ձախակողմյան ներքնամասում կա տաճկերեն մի նախադասություն, գրված ոսկեգույն թանաքով:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ծաղկողը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 19-րդ դար:— **Վայրը՝** Կոստանդնուպոլիս: —**Ծանոթություն՝** սույն բերաթը նվեր է ստացվել Ստամբուլից:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1բ.— Կա մի տող տաճկերեն և երկու ստորագրություն:

Բերաթին կից կա մի թղթակտոր, որի վրա գրված է «Միքայել էֆենդի»: Կա նաև 500 համարը:

Ծրարի վրա գրված է նույն անունը. «Միքայել էֆենդի»:

№ 384

ԲԵՐԱԹ

(Տաճկերեն)

**Թերթերը՝** 1:— **Պրակները՝** 1:— **Մեծությունը՝** 57,4×37,1×0,01 սմ.:— **Նյութը՝** դեղնած հաստ թուղթ:— **Կազմ՝** չունի, դրված է նամակի մի մեծ ծրարի մեջ:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 1բ:— **Տողերը՝** 3:— **Գծումներ՝** չունի:— **Գիրը՝** արաբերեն նասխի տառեր:—**Զարդագրություն՝** չունի, սակայն վերևում և կենտրոնում տպագիր նկարված է իսլամական տուղրան, ոսկեգույն, բառերն ու տառերը մեջնմեջ ընդելուզված: Տուղրայի չափերն են 17,3×13 սմ.: Տուղրայի ձախակողմյան ներքնամասում կա տաճկերեն մի նախադասություն, գրված ոսկեգույն թանաքով:— Գրիչը՝ անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ծաղկողը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 19-րդ դար:— **Վայրը՝** Կոստանդնուպոլիս: —**Ծանոթություն՝** սույն բերաթը նվեր է ստացվել Ստամբուլից:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1բ.— Կա մի տող տաճկերեն և երկու ստորագրություն:

Ծրարի վրա գրված է հետևյալ անունը. «Խորասանճյան Միքայել բեյ»:

№ 385
ԲԵՐԱԹ
(Տաճկերեն)

**Թերթերը՝** 1:— **Պրակները՝** 1:— **Մեծությունը՝** 5[illegible],8×36,7×0,01 սմ.:— **Նյութը՝** դեղնած հաստ թուղթ:— **Կազմ՝** չունի, դրված է նամակի մի մեծ ծրարի մեջ:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 1բ:— **Տողերը՝** 3:— **Գծումներ՝** չունի:— **Գիրը՝** արաբերեն նասխի տառեր:— **Զարդագրություն՝** չունի, սակայն վերևում և կենտրոնում տպագիր նկարված է իսլամական տուղրան, ոսկեգույն, բառերն ու տառերը միջեմեջ ընդելուզված: Տուղրայի չափերն են 19,7×14 սմ.: Տուղրայի ձախակողմյան ներքնամասում կա տաճկերեն մի նախադասություն, գրված ոսկեգույն թանաքով:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ծաղկողը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 19-րդ դար:— **Վայրը՝** Կոստանդնուպոլիս: —**Ծանոթություն՝** սույն բերաթը նվեր է ստացվել Ստամբուլից:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1բ.— Կա մի տող տաճկերեն և երկու ստորագրություն:

Ծրարի վրա գրված է հետևյալ անունը. «Միքայել էֆենդի»:

№ 386
ԲԵՐԱԹ
(Տաճկերեն)

**Թերթերը՝** 1:— **Պրակները՝** 1:— **Մեծությունը՝** 57,3×37,3×0,01 սմ.:— **Նյութը՝** դեղնած հաստ թուղթ:— **Կազմ՝** չունի, դրված է նամակի մի մեծ ծրարի մեջ:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 1բ:— **Տողերը՝** 3:— **Գծումներ՝** չունի:— **Գիրը՝** արաբերեն նասխի տառեր:— **Զարդագրություն՝** չունի, սակայն վերևում և կենտրոնում տպագիր նկարված է իսլամական տուղրան, ոսկեգույն, բառերն ու տառերը միջեմեջ ընդելուզված: Տուղրայի չափերն են 17,3×13 սմ.: Տուղրայի ձախակողմյան ներքնամասում կա տաճկերեն մի նախադասություն, գրված ոսկեգույն թանաքով:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ծաղկողը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 19-րդ դար:— **Վայրը՝** Կոստանդնուպոլիս: — **Ծանոթություն՝** սույն բերաթը նվեր է ստացվել Ստամբուլից:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1բ.— Կա մի տող տաճկերեն և երկու ստորագրություն:

1300 tenlidi aldige Ici Mecidyua berati.

Ծրարի վրա գրված է հետևյալ անունը. «Խորասանճյան Միքայել էֆենդի»:

№ 387
ԳՐՈՒԹԻՒՆ
(Տաճկերեն)

**Թերթերը՝** 1:— **Պրակները՝** 1:— **Մեծությունը՝** 37,3×23,2×0,01 սմ.:— **Նյութը՝** դեղնած հաստ թուղթ:— **Կազմ՝** չունի, դրված է մի ծրարի մեջ:— **Պահպանակներ՝** չունի: **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 1բ:— **Տողերը՝** 2:— **Գծումներ՝** չունի:— **Գիրը՝** արաբերեն նասխի տառեր:— **Զարդագրություն՝** չունի, ստորագրության տեղում կա տաճկերեն մի սև կնիք 2,1 սմ. տրամագծով:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ժամանակը՝** 19-րդ դար:— **Վայրը՝** Կոստանդնուպոլիս:— **Ծանոթություն՝** գրությունն ստացվել է նվեր Ստամբուլից:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 1ա.— Տաճկերեն գրված է հետևյալ անունը. «Միքայել Խորասանճյան»:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ծրարի վրա գրված է հետևյալ անունը. «Միքայել Խորասանճյան»: Կա նաև նույն սև կնիքը:

№ 388
ՊԱՏԱՌԻԿՆԵՐ
Ա. ԱՒԵՏԱՐԱՆ

**Թերթերը՝** 1:— **Մեծությունը՝** 17×12,8 սմ.:— **Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստրակ թուղթ:— **Կազմ՝** չունի:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** անբավարար:— **Գրությունը՝** երկսյուն:— **Տողերը՝** 19:— **Գծումները՝** ճնշումով:— **Գիրը՝** բոլորգիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** Գալուստ աբեղա:— **Պատվիրատուն՝** Մանվել աբեղա:— **Ժամանակը՝** 1494 թ.:— **Վայրը՝** Հոռոմայրի Ս. Նշան վանք:— **Ծանոթություն՝** սույն պատառիկը հանված է Մայր Աթոռի № 317 ձեռագրից, որ նվեր է ստացվել Ս. Հայաստանի ներքին թեմերից:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 1ա.— ... և յետինս անարժան գոլով ամենայն գրագրի Գալուստ գրիչս սուտանուն աբեղայ, ծերացեալ ալեաւք և զառածեալ մեղաւք: Արդ ցանկացող եղեն սիրովն Քրիստոսի սուրբ Աւետարանիս բարեմիտ և հեզահոգի պարոն Գունդաղմիշն և կենակիցն իւր Էդիլ Մէլիքն և հանգուցեալ եղբաւրն Մուրատին, որ տարաժամ փոխեցաւ առ Քրիստոս, ստացան սուրբ Աւետարանս յիշատակ հոգոյ իւրեանց և ի վայել[ում]ս նորաբողբոջ կուսակրաւն Մանուէլ աբեղային զոր Տէր Աստուած վայելէլ տացէ, ամէն: Նայև զդստերքն իւր զպարոն Խաթունջանն և զՆուշիջանն, և զՇահսալթանն, և եղբաւրորդոյն իմոյ Հէճուպին, և որդոյ նորին Գա-

գիպին, որ ետ ազնուաթիւն Սուրբ Աւետարանիս Ա փիրի և գրեցաւ սայ ի թվ[ականի] Հայոց ՋԽԳ (1494 թ.—Ն. Մ.), ի դուռն սուրբ Նշանին Հոռոմայրի, ի յառաջնորդութեան Տէր Արիստակէս եպիսկոպոսի, և պարոնութեան Լոռոյ պարոն Ղօղբին, և ի դիւան[ապետ]ութեան երկրիս պարոն Դաւթին, և եղբաւրորդոյն իւրոյ պարոն Ամիրջանին, զ՚որ Տէր Աստուած ընդ երկայն աւուրս արասցէ, Ամէն:

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.— Մ. Արա. (ստորագրություն ըստ երևույթին Մանվել աբեղայի):

Թ. 1բ.— Կրկին յիշեցէք ի Քրիստոս զնոգիընկալ ծառայս Աստուծոյ զՄարթաս որ ետացաւ զսուրբ Աւետարանս ի հալալ արդեանց իւրոց, և ետ յիշատակ ի գիւղն Անկառին ի ձեռն Տէր Աւետիսին, ով որ կարդայք կամ տեսանէք, Աստուած ողորմի ասացէք Մա[ր]թաչին, և ծնօղացն հօրն Ղարայխանին, և մօրն Շահսուլթանին, սայ Մէլիքին, և ամենայն արեան զարմին, բայց ով որ չունի իշխանութիւն հանելո զսուրբ Աւետարանս ի գիւղէն Անկառինոյ, իսկ որք յանդգնին պարտապան լիցին դատաստանին, ի թվին ՌՃԻԶ (1677 թ.—Ն. Մ.) փետրուարի ԺԳ եղև գիրս Արզրում:

Հանված է № 317 ձեռագրից, Աւետարան:

## Բ. ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

**Թերթերը՝** 1:— **Մեծությունը՝** 37,5×22,7 սմ:— **Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստ թուղթ:— **Կազմ՝** չունի:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** երկսյուն:— **Տողերը՝** 37:— **Գծումները՝** ճնշումով:— **Գիրը՝** բոլորգիր:— **Զարդագրություն՝** ունի մեկական սիրուն թռչնագիր և լուսանցազարդ:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատու՝** անհայտ:— **Ծաղկողը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 16—17-րդ դարեր:— **Վայրը՝** անհայտ:— **Ծանոթություն՝** ստացվել է Հոգևոր Ճեմարանի գրադարանից 1965 թ. փետրվարի 27-ին: Պատառիկը ներկայացնում է մեծածավալ մի Հայսմավուրքի 59-րդ պրակի վերջին թերթը: Թ. 1բ-ում նշված է ԾԹ:

## Գ. ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

**Թերթերը՝** 1:— **Մեծությունը՝** 33,6×23 սմ.:— **Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստ թուղթ:— **Կազմ՝** չունի:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** շատ վատ, պակասավոր, մի քանի տեղից պատռված է: —**Գրությունը՝** երկսյուն:— **Տողերը՝** 35—39:— **Գծումները՝** ճնշումով:— **Գիրը՝** բոլորգիր:— **Զարդագրություն՝** ունի հասարակ երկու թռչնագրեր:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատու՝** անհայտ:— **Ծաղկողը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 17—18-րդ դարեր:— **Վայրը՝** անհայտ:

## Դ. ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

**Թերթերը՝** 2:— **Մեծությունը՝** 33×23 սմ.:—**Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստ թուղթ:—**Կազմ՝** չունի:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** շատ վատ, պակասավոր և պատռված:— **Գրությունը՝** երկսյուն:— **Տողերը՝** 37:— **Գծումներ՝** չունի:— **Գիրը՝** բոլորգիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատու՝** անհայտ:— **Ժամանակը՝** 16—17-րդ դարեր:— **Վայրը՝** անհայտ:

## Ե. ՀՄԱՅԻԼ

**Թերթերը՝** 3:— **Մեծությունը՝** 30,2×13 (թերթի կեսը չկա):— **Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստ թուղթ:— **Կազմ՝** չունի:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** վատ, երեք թերթերն էլ մեջտեղից կըտրատված են:— **Գրությունը՝** երկսյուն:— **Տողերը՝** 34:— **Գծումներ՝** չունի:— **Գիրը՝** նոտրգիր:— **Զարդագրություն՝** չունի, սակայն լուսանցքները ու այլ մասեր ներկված են զանազան գույներով:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատու՝** անհայտ:— **Ծաղկողը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 19-րդ դար:— **Վայրը՝** անհայտ:

## Զ. ՃԱՇՈՑ

**Թերթերը՝** 1:— **Մեծությունը՝** 26,8×18,6 սմ.:— **Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստ թուղթ:— **Կազմ՝** չունի:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** շատ վատ, պակասավոր է:— **Գրությունը՝** երկսյուն: —**Տողերը՝** 33:— **Գծումները՝** ճնշումով:— **Գիրը՝** բոլորգիր:— **Զարդագրություն՝** ունի մեկական սիրուն զարդագիր և լուսանցազարդ:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատու՝** անհայտ:— **Ծաղկողը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 16—17-րդ դարեր:— **Վայրը՝** անհայտ: —**Ծանոթություն՝** սույն պատառիկը հանված է Մայր Աթոռի № 49 ձեռագրից:

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 1ա.— Եւ Ճաշու զայս գիրս կարդայ:

## Է. ՃԱՇՈՑ

**Թերթերը՝** 1:— **Մեծությունը՝** 21,5×13 սմ.:— **Նյութը՝** դեղնած և կեղտոտած հասարակ թուղթ:— **Կազմ՝** չունի:— **Պահպանակներ՝** չունի:— **Վիճակը՝** վատ:— **Գրությունը՝** երկսյուն:— **Տողերը՝** 25:— **Գծումներ՝** չունի:— **Գիրը՝** բոլորգիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատու՝** անհայտ: —**Ժամանակը՝** 15—16-րդ դարեր:— **Վայրը՝** անհայտ:— **Ծանոթություն՝** սույն պատառիկը հանված է Մայր Աթոռի № 321 ձեռագրից, որ 1696 թ. մի Ավետարան է: Պատառիկի վերևում և կողքին կըպցըված են մի այլ ձեռագրի երկու փոքրիկ կտորներ:

(Շարունակելի)